**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

**Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Արագածոտն բնակավայրի 4 և 22 հողամասերում Սան-1 արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի**

***կառուցման 2-րդ***

**ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄ**

***Արագածոտն բնակավայր***
***7.11. 2025թ.***

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (03.05.2024թ. ՀՕ-150-Ն, այսուհետ՝ Օրենք) համաձայն, ինչպես նաև ՀՀ կառավարության 28 դեկտեմբերի 2023 թվականի N2343-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) սահմանված կարգով 2025թ. նոյեմբերի 7-ին ժամը 14:30-ին Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ Արագածոտն բնակավայրի 4 և 22 հողամաս հասցեներում «ՍԱՆ ԱԳՐՈ» ՓԲԸ-ի կողմից նախատեսվող 5 ՄՎտ հզորությամբ արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային 2-րդ լսումը:

Մասնկացում էին ՇՄԱԳ-ի ներկայացուցիչներ, Արագածոտն բնակավայրի վարչական ղեկավարը, աշխատակիցներ, նախաձեռնող կողմի և կապալառու ընկերության ներկայացուցիչներ և բնակիչներ /մասնակիցների ցանկը կցվում է/:

ՇՄԱԳ-ի ներկայացուցիչ Սուսաննա Անտոնյանը ներկաներին տեղեկացրեց արևային ֆոտովոլտային կայանի կառուցման ընթացքում նախատեսվող բնապահպանական ռիսկերը և դրանց կանխարգելման եղանակները:

«ՍԱՆ ԱԳՐՈ» ՓԲԸ-ի ներկայացուցիչը ներկայացրեց ծրագրի տեխնիկական բնութագրերը, նախագծի և համայնքին տրամադրվող աջացության վերաբերյալ մանրամասներ:

Արագածոտն բնակավայրի բնակիչները բարձրացրեցին իրենց հուզող հարցերը, որոնք վերաբերում էին հողամասի հետագա օգտագործմանը և հասցվող վնասներին:

Ընկերության ներկայացուցիչները հայտնեցին, որ ընկերության համար կարևոր է, որ բնակիցչները համաձայնվեն իրեց մանր եղջերավոր կենդանիներին արածեցնել արևակայանի տարածքում, քանի որ արևակայանի կառուցումը ապահովում է ստվերային մասի հողատարածքում, որի արդյունքում անհրաժեշտ է լինում պարբերաբար խոտհունձ իրականացնել: Բնակիչները մանր եղջերավոր կենդանիների արածեցումը տարածքում օգտակար է թե՛ բնակիչների, թե՛ ընկերության համար, քանի որ արածեցումը թույլ կտա խուսափել ավելորդ ծախսերից: Կարևորելով ծրագրի հատկապես սոցիալական բաղադրիչը՝ հանրային լսման մասնակիցները իրենց դրական կարծիքը հայտնեցին իրականացվող աշխատանքների վերաբերյալ:

Սուսաննա Անտոնյանը հավելեց, որ նախատեսվող գործունեության տարածքում և հարակից մոտակա տարածքներում բացակայում են Կարմիր Գրքի բուսատեսակները, կենդանատեսակները, ինչպես նաև պատմության, բնական հուշարձանները և մակերևութային ջրերը:

Ընթացքում քննարկվեց հնարավոր առաջացող վտանգավոր թափոնների հարցը և նշվեց, որ ընկերությունը պատրաստվում է վնասված վահանակները պահպանել հատուկ փակ տարածքում, իսկ մնացած վտանգավոր թափոնները կհեռացվեն օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հանրային լսմանը այլ առաջարկներ և դիտողություններ չներկայացվեցին:

**ՇՄԱՓԿ փորձագետ՝** **Սուսաննա Անտոնյան**

**«ՍԱՆ ԱԳՐՈ» ՓԲԸ-ի ներկայացուցիչ՝**